ԲԱՆԱՍԻԱԿԱՆ

Է՞Ր ԵՄ ԵՍ ՄԻՇՏ ՏԽՈՒՐ.

(Գ-Նէ-ա).

Անցնում է ձմրան պաղ սառնամանին,
Հալչում է ձիւնը, նորոգվում բնութիւն.
Երկիրն է զարթում, թողում իւր խոր քուն,
Նոր կեանք է շընչում և կենդանութիւն.

Արարածք համայն ուրախ են զուարթ
Տեսնելով գարունն իւրեանց յանդիման,
Ծըպտում է ուրախ իւրաքանչիւր մարդ,
Խընդում է անգամ անասունն անբան.

Կայ և մի խեղճ սիրտ, որ շատ անտարբեր
Խըփում է միշտ թոյլ և է անըզգայ,
Է՞ր քաղցրըն գարուն այն աւետաբեր
Չէ հընչում ուրախ և լարերն նորա.

Այն իմ խեղճ սիրտն է, ես եմ նորա տէր,
Է՞ր եմ ես տխուր . . . Դո՛ւ գիտես, իմ Տէր.
Միակ և անբաղդ եմ այս աշխարհում,
Մայրենի բարբառն ինձ չէ ողջունում.

Ընթանում եմ ծանր, չունիմ ես հանգիստ,
Անբաղդութիւնն ինձ հետևում է միշտ,
Եդեմն ինձ համար տեսնելով փակուած,
Տխուր եմ տխուր, ա-լ-՛ա Աստուած.

Տղայ հասակից ես սակաւ անգամ
Տեսայ իմ բաղդին ինձ դէմ ժպտալիս,
Բաժինս եղել է միշտ և տառապանք
Սփոփանք իմ Տէր, Ա-բէլ Աստուած.

Իսկ այժմ սրտաբեկ, մահուան դուռն հասած՝
Առ քեզ եմ դիմում, Բ-բէ-ր Աստուած,
Փրկէ՛ անբաղդիս գէթ այս վայրկենում
Թող շունչս փչեմ մայրական գրկում.

ՊԱՆԴՈՒԽՏ.

Մ-ր 1885.
Լ-մբ-ր-ա-մ